Ողջու՛յն, սիրելի՛ Ռոյա,

Ես Նելլին եմ՝ 20 տարեկան: Շնորհակալ եմ բարի նամակիդ համար:

Նամակը կարդալիս փորձում էի պատկերել քեզ իմ մտքում: Ուրեմն հիմա, եթե դու փորձում ես նույնն անել, պատկերացրու՛ երիտասարդ աղջկա՝ մի փոքր թուխ մաշկով և սև, գանգուր մազերով: Ես նույնպես առաջին անգամ եմ նամակ գրում մեկին, ում չեմ ճանաչում: Հույս ունեմ մի օր անձամբ հանդիպել և զրուցել քեզ հետ գուցե Վրաստանում, Ուկրաինայում կամ որևէ այլ երկրում կամ գուցե Հայաստանում կամ Ադրբեջանում, ո՞վ գիտի: Նախկինում ես հանդիպել եմ ադրբեջանցի երիտասարների և նրանց հետ անձամբ խոսելու հնարավորություն ունեցել: Թու՛յլ տուր քեզ մի բան ասել. ես միայն լավ և դրական տպավորություններ եմ ստացել:

Ճիշտ քեզ նման ես նույնպես հավատացած եմ, որ մի օր ամեն բան ավարտվելու է, աշխարհը դառնալու է ավելի խաղաղ վայր, ես ավելի շատ ադրբեջանցի ընկերներ եմ ունենալու, և մենք երկուսս էլ կարողանալու ենք այցելել միմյանց մեր երկրներում: Վերջերս Ուկրաինայում մի կոնֆերանսի ժամանակ, ես մասնակցում էի մշակութային երեկոյի: Մասնակիցները պետք է խառնեին բոլոր մասնակից երկրների անունները և յուրաքանչյուրը վերցներ միայն մեկ թղթի կտոր: Թղթի վրա գրված էր այն երկրի անունը, որի պարը պետք

է սովորեր մասնակիցը: Իմ թղթի վրա գրված էր «Ադրբեջան»: Իրականում ես շատ հետաքրքրված և խանդավառված էի, որ պետք է սովորեմ ձեր ավանդական պարերից մեկը: Այն կոչվում էր «Նազ էլամա»: Մենք պետք է պարեինք զուգընկերոջ հետ, և իմ զուգընկերը վրացի ընկերներիցս մեկն էր: Մենք նկատեցինք, թե որքան նման էին մեր երեքի ավանդական պարերի շարժումները. աղջիկների ձեռքերի նուրբ շարժումները և տղաների ծափերը: Հայը և վրացին ադրբեջանական պար են պարում, ծիծաղելի է, այնպես չէ՞: Այդ օրը ես նկատեցի, թե որքան շատ են մեր ազգերի, մշակույթների և պարերի նմանությունները: Ես ջերմ ու ծանոթ զգացողություններ ունեցա այն պարելիս: Ես մտածեցի, որ եթե մի օր կարողանանք կենտրոնանալ մեր նմանությունների վրա տարբերությունների փոխարեն, մենք ավելի կատարյալ և խաղաղ աշխարհում կապրենք: Եթե խաղաղությունն օվկիանոս է, ապա ես ցանկանում եմ իմ կաթիլն ունենալ դրանում:

Ընկե՛րս, ես համաձայն եմ, որ մենք՝ դու և ես, պետք է անենք ամեն բան կանխարգելելու անցյալի կրկնությունը: Ես ցանկանում եմ, որ մենք շարունակենք հավատալ, որ իմ և քո սերունդները դառնալու են խաղաղության դեսպաններ:

Շնորհակալ եմ՝ ժամանակ տրամադրելու համար: Հույս ունեմ մի օր անձամբ հանդիպել և ավելի լավ ճանաչել քեզ: Իսկ մինչ այդ այս նամակին եմ կցում իմ էլ. փոստի հասցեն: Ուրախ կլինեմ լուր ստանալ քեզանից :):

Սիրով՝

Քո առաջին հայ ընկեր

Նելլի